Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԼՈՐԻՍ

ՄԱՅՐԻԿ ԲԼՈՒՐ

ELLA REAVE BLOOR

1935

ՍՏԱԼԻՆԱՍԱ Է 1961 Թ.
83.99
Լ-82

ԼՈՐԻՍ

ՄԱՅՐԻԿ ԲԼՈՒՐ

(ԵՊԻԿ – ՊՈԵՄ)

«ԱՄԵՐ – ՋԱՀԵՐ» ՇԱՐՔԻՑ

MOTHER BLOOR

(ELLA REAVE BLOOR)

1935

ԲՈՍՏՈՆ

115504

Ընկեր Ընթերցող,

Այս գրքոյկը քեզ ներկայացնելով, հետապնդած կըլլանք երկու միջոցներով՝ մէկ նպատակ։ Այլ խօսքով՝ կը զարնենք... մէկ քարով՝ երկու թռչուն։

Նախ, քո քրտինքի կաթիլներէն մէկ քանին կը տրամադրես յօժար սրտով, Մայրիկ Բլուրի եւ իր նմաններին ձերբազատման գործին՝ օրէնքի ապօրինի ճանկերէն, այսօ՛ր, վաղը եւ մինչեւ գալուստը անդառնակարդ հասարակակարգի։

Եւ երկրորդ, մասնաւորապէս մօտիկէն ծանօթանալու պատեհութիւնը կունենաս ընկեր Մայրիկ Բլուրի փոթորկոտ կեանքի այն փուլին, որը շարունակութիւնն է իր հարազատ նախորդներին — Ռոզա Լիւքսէմբուրկի, Կլարա Ցետկինի եւ այլ համեստ ու անանուն մարտնչող կանանց։

Ա՛ռ ու կարդա. տո՛ւր որ օգնես. եւ ահա մենք, դիւղացիներս ու բանւորներս ողջ երկրաղնդի, մէկ քայլ եւս մօտեցած կըլլանք մեր վերջնագոյն նպատակին...։

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ՄԱՐՄԻՆ

ՄԱՅՐԻԿ ԲԼՈՒՐ

(ԵՊԻԿ – ՊՈԵՄ)

«ԱՄԵՐ – ՋԱՀԵՐ» ՇԱՐՔԻՑ

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Ք

Լսէ՛ք խօսքն իմ խելացի.
Ի՞նչ էք անում, ա՜յ կիներ.
Զատակ ծնելուց բացի՝
Բարձրը պահել ձեր... դներ:

Ի՞նչ էք արել մինչ հիմակ,
Կոլոմբոսի էս երկրում.
Գիրացնելուց զատ... դմակ՝
Հոմ որակեալ վայրերում:

Կէս առ հազար տէրերին
Երկնելուց ետք գերիներ.
Զէ՞ք վերջ տալու ձեր դերին,
Սրբագրելու թերիներ:

Մոխ՛կ տէք աշուղիս
Հնչեղ երգին գոռ ու կուռ.
Տեսէ՛ք գերան ու շիւղիս
Իրար աչքում դեռ հաւկուր։

Կեա՛նքն եմ երգում ձեզ համար,
Կեա՛նքը Մայրիկ Բլուրի.
Կեա՛նքն անաղարտ ու յամառ.
Կեա՛նքը Մայրիկ Բլուրի։

*
* *

Նիու–Զրդու Բրիջտոն քաղքի եկեղեցում՝
— Ինչպէս սովոր են մեծ մասը Եանկի երկրի —
Կիրակի օր, մի փուճ դասի առ ի ցնծում,
Գնալ – դառնալ անաշխատ հաց թարմ ու բերկրի,

Մի փոքր աղջիկ, որանից՝ վեց տասնեակ տարի,
Ներս էր ընկնում — համակ վճիռ — հաստատակամ,
Անդամների դրքից ընջել մինչ այդ բարի
Հաւատացեալ կարծեցեալի իր հետքն անդամ:

Շնչովն արբշիռ Ինգերսոլի ու իր քեռու
Դանի Վէբի յաճախակի խրատներին,
Մինչեւ էսօր՝ Էլլա Ռիվը քաշուած հեռու,
Զունի մի դիծ որ յիշեցնի նախկին գերին:

Դիւրի՞ն բան էր քանդել երեք դարու մտքեր
Նախնիքներից աւատական պուրիտանի.
Եւ որպէսզի չը մնային տեղը հետքեր,
«Պէտք էր լցնե՛լ» մտորմունքն էր քեռի Դանի:

Ու նա, փութով հայթայթում էր Ֆիսկ, Դարվինի
«Թաքուն Աշխարհ» եւ «Ծագումը՝ Տեսակ, Մարդու»
Որ ուղեղին՝ հմայքին տակ ժանգոտ հնի
Մութից աղատ, ճամբան հարթէր իր քրոջդու:

Հակառակ իր հօր խրատին՝ թէ չը պէտք էր
Ականջ կախել Աստծուն ժխտող քեռի Դանի,
Նա, օրն օրին դուրս էր վանում մամռոտ հնաքեր
Վաղահաս, լուրջ, թրթռուն կեանքից իր պիտանի:

Կէնդի, գըմ, բոյ* — երրորդութիւնն Եանկի աղջկա
Զէին խօսում էլլա Ռիվի սրտին, մտքին.
Երազներով մօտենում էր նա հեռակա
Բարձր ուսումի հրատոչոր դռա մուտքին:

Երեք տարի հազիւ էր անց, երբ պարտաւոր
Մեռնող մօր տեղ՝ տանտիկին էր դառնում լրջմիտ,
Ու սանձարձակ վերելքների միտքը սովոր՝
Ոգորում էր պահել թռիչքն իր դինամիդ:

Որբ աղբրտոց ու քոյրերի շարանի հետ
Զոտնակոխած դժնեհ կեանքի սեմում տարեց,
Դեռ դեռատի, բաղձաց փնտռել նոր արահետ,
Ճանապարհը դոյդ կտրելու ընկեր ճարեց:

Ճարեց – շարեց փոքրիկների մի խումբ ի՛նքն էլ.
Դառաւ խակոյն նահապետի մի ընտանիք.
Կայծը սակայն շարունակում էր առինքնել.
Գլխին վերեւ կախ տալ մի օր ուսման տանիք:

---

*) Քաղցրաւենիք, ծամոն, պատանի բարեկամ:

Քառորդ դարու շեմքին հազիւ նա ոտ դրած,
Երկնեց մաքի իր առաջին զաւակն արու.
Եւ իղձերի խառնարանից ծովատարած,
Թոչէք առաւ ու թը՛ռ թռաւ հեռո՛ւ, հեռու:

Քաջալերուած իր անդրանիկ դրախտոցից,
Շարունակեց աշխատակցել թերթ ու դրի,
Աչք չէր թաքցում մարմնային ու մաքի գործից.
Մինչեւ հասնէր հանգրւանում նոր կարգերի:

Ահա մի օր, էտիկական Կուլտուրայի
Ընկերութեան հաւաքոյթում՝ լսեց մասին
Դոկտոր Բոնից՝ Գերմանական մի Հսկայի,*
Որ ռահվիրան դարաւ իրա կեանքի դասին:

Նոր խմացաւ որ գտել էր իր փնտռածին.
Ու մինչ նրան լծում էին կազմակերպչի
Ջուլհակների համատարած թշւառ գործին՝
Իսկոյն գտաւ որ քարոզ տալ խելոք կերպ չի:

Ու մօտ օրից, ականջալուր մի տաք վէհի
Հէնրի Հետսել եւ Ֆրեդ Լոնգ մարդկանց միջեւ,
Մին՝ ճառում էր գոլար ոսկուց ու կանաչի,
Երբ համբերանքն հասած Լոնգի պուկը մինչեւ,

---

*) Կարլ Մարկսին է ակնարկում:

«Ի՞նչ յիմար միտք» բղաւեց նա. «ինչպէ՞ս ճառել
Փողի մասին, երբ բանւորներ ոչինչ չունեն,
Երբ յաջողւի նրանց ամէն ինչ դրաւել՝
Ին ժամանակ ահա նրանք հանդիստ կ՚անեն»:

«Բանւորը՝ տէր մեքենայի» ի՞նչ գաղափար.
Շփոթ էլլան մտորում էր ու մտածում.
Եւ խառնածին իր մտքերին նոր կաղապար
Նշմարեց նա Սոցիալիզմի վառ հնոցում:

«Խնդրե՛մ, ի՞նձ էլ ընկեր գրէք էդ լաւ գործին.»
Լրջմտութեամբ ղիմում արաւ Դոկտոր Բոլի.
«Շղթաներից ձերբազատման էդ նոր փորձին՝
Կարո՞ղ էք ինձ ղինւոր հաշւել վառ ու մոլի:»

Եւ մեր դարու առաջին իսկ տարուց ի վեր,
Կի՛նը միակ, կի՛նն առաջին, կի՞ն ընկերվար
Այր մարդկանց հետ, նրանց կողքին պարզած թեւեր,
Բարձր էր բռնում ճնշւած դասի դրօշը վառ:

Դը Լէոնի ու մերթ Դեբսի կանգնած կողքին,
Քաղքից քաղաք ու հանքից հանք հուրքով առլի՝
Մա՛հ էր գոչում Կոմունայի ժանտ մողոքին,
Շունչ չնչի հետ, մահից պրծած Սանիալի:*

---

*) Պարիզի Կոմունայի վերապրող հերոսներից մին՝ որ Ամերիկա էր ժամանել:

Հինգ տաւա մէջ էնքան էր նա դիղել պաշար,
Որ Սինկլերի «Ջնդրլ» դրքի առթիւ խօսած
Պէկբռների* սադրանքի դէմ նախապաշար
Հակադրում էր իր մարտական տակտիկն ուսած:

Օհայեոյում, ինը հաւր տասնեամէկին,
Հանդիպեց մի այլ բանւորի — Մայրիկ Ջոնսին —
Հետը վերցրած զոյգ մանչերին՝ Կարլին, Դիկին,
Շրջում էին հիւղակ, դիւղակ, հանք միասին:

Էշ, ձի, ջորու վոխադրական միջոցով լոկ,
Բուքին, քամուն ու անձրեւին ամէն տեսակ,
Ճակատում էր դէմ ու դիմաց անվախ, անհոգ
Ընկերութեանց վարձկաններին արիւնկղակ:

Տասներկուսին, իր մի այրը ջրից էն դի,
Պողպատում էր նրա ոգին արդէն երկաթ.
Լիրկնեխտ ու Մանն, այլ ընկերներ վտարանդի
Հեղեղն էին կառուցանում ջրով կաթ-կաթ:

Կալիմէտի հանգադրծի մանուկների
Մի հոծ խմբի խողխողումը լերբ թակարթից,
Դարձրեց նրան կորիւնադուրկ վայրի վագրի
Գիշեր – ցերեկ մշտահալած Եանկու կարթից:

---

*) Մխ արտադրող ընկերութիւն:

Եւ Լուդլովի դէպքն ամեհի տասնըչորսին՝
Մի բուռ կրակ եւս ածելով սրտում քրքուր,
Ու վերջ տալու հալածող չան եւ խեղճ որսին՝
Պէտք էր ուժեղ կազմակերպել բանակը կուռ:

Հէնց էն օրից երդւեց մի կողմ դցել յոյզեր.
Տուն – տեղ թողած դառնալ խալխին Մայրիկ Բլուր,
Լոկ արնակաղ իւրայինին չը տածել սէր,
Այլ՝ ամէնքի՛ն, այլ՝ ամէ՛ն տեղ, այլուր, այլո՛ւր:

Ու չորս տարի քառասուն տարեան թէժ կրակով.
Մի շրջանից՝ մի այլ շրջան, շրջո՛ւն գործիչ,
Հաստատում էր թէ՛ քանակով թ՛է որակով
Մարտիկ խմբեր Պատ փողոցի բերնին սանձիչ:

Մի օր միայն վատ զգաց նա. տասն եւ հնգին,
Երբ որ Դեբսին իր Միութեան մարդկանց ձեռքով
Երկաթուղով յանձնում էին բանտի խորքին
Եանկի – կողակ բանդիտները խառն իրար քով:

Նա էր իսկոյն ընթացք տւեց I. L. .D–ին.*
— Կուանը մեծ բանւորական մեր բազմաղդի —
Որ մինչ այդ, մի անղեկ հօտ էր, թոյլ, անմարմին.
Անկարող իսկ լծւել եռուն թափ ու վաղքի:

---

*) Ձերբակալւած բանւորների Ազատութեան ընկեր.

Եւ վերջապէս աշխարհ եկաւ անակընկալ
Ին Ամերիկան, ծնունդ՝ Ռո՛ւս եւ Հոկտեմբերի,
Որից՝ Հիդրան սկըսեց ողջ հեւալ, տնքալ
Կաղկանձիւնով դժոխային իր Կերպերի։

Մայր Բլուրի երգն անթաղ, երգը թէժ
Երկրագնդի մի մեծ մասում հագած մարմին՝
Սպասում էր ակունքներից դառնալ ջրվէժ,
Ազատութիւն բերել համայն բանւոր զարմին։

Իր կէս դարեան գործնէութեամբ միշտ ձախ ու ձախ
Այլեւս հասուն էր նկատում իր ձախ դասին
Ամէն կարգի քոստոներից պոկւած, անկախ՝
Համը տեսնել Սովետական գինու թասին։

Տասն եւ ինների Սոց–ժողովի նոր երկունքից
Մի զոյգ մանչեր էին ծնում նոյն անունով.
Մինչ պառաւած մէրն աղերսում էր երկնքից
Չը բաժանել վաշտը դեղին տեղով–տնով։

Մանչերը զոյգ զօրւած սրտով ի մի սակայն,
Ինամքին տակ Բլուր, Ֆոստրը* դայեկների՝
Վերածւեցին երկւորեակի սիամական
Դէն վանելով խումբն սպիտակ ճայեկների։

---

*) Չը պէտք է մոռանալ նաեւ Կարլ Ռուտեմբերգը։

Եւ երախան անունն առաւ — Ամեր–կոմ–Կուս —
Օրրան փոած Մէյնից մինչեւ Սանֆրանչիսկո.
Որպէս նորեկ բանւոր Ատլաս բազուկն ու ուս
Նեցուկ տալով բանւորական բեռի ներքո:

Մայրիկ Բլուր այցի գնաց երեց որդուն*
Երբ նա գալար թրպրտում էր սովի ճանկում.
Բայց մարմնական կազմն ահարկու և միտքն արթուն
Փաստեր էին կենդանութեան նրա կեանքում:

Ու էն օրից՝ նա բազմաթիւ զաւակների
Մայրիկը մեծ, Մայրիկ Բլուր տիտղոսն ուսին,
Որպէս օդում ճախրող – թռչող, ջին ու փերի՝
Սպասում է Ողջ Աշխարհի Արշալոյսին:

Եօթանասուն տարիների բեռն իր ուսում՝
Իբրեւ ճամբորդ երկրաղնդի մահկանացու,
Ջաղ օրերի, սաղ օրերի ճիգն է թափում,
Եանկի երկրում ունենալ մի Սովետ Ածու,

Որի բողբոջ տունկերից մին ինքը լինի.
Ապա երեք քառորդ դարու կեանքից բեզար՝
Մահից առաջ՝ տեսնելով ժանտ սատանն հնի,
Ինի խաղաղ հողին ներքեւ իր լալեղար...:

ՎԵՐՋ

12 – 13 Մարտի 1935

---

*) Սովետ Միութիւն:

A 5504 29409

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0041558

= 5n =

A I 5504

Մեկ օրինակ

ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

«ԱՄԵՐ – ՋԱՀԵՐ»Ի

ՀԵՏԵԻԵԱԼ ՇԱՐՔԸ

Բ. Կարլ Ռուտեմբերգ

Գ. Բիլ Հէյվուդ

Դ. Վ. Զ. Ֆոստըր

Ե. Ըրլ Բրաուդըր